

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո յուրանասունութ տարեկան հասակում Լոս-Անջելոսում վախճանվեց բաղձավաստակ պատմաբան Հրանդ Ք. Արմենը:



Հրանդ Ք. Արմենը ծնվել է Կեսարիայի Թալաս գյուղաքաղաքում: Դեռ պատանեկան հասակում նա թողնում է հայրենի Թալասը և 1911 թ. մեկնում ԱՄՆ, ուր նախօրոք տեղափոխվել էր իր եղբայրը: Նա աշխատում է եղբոր ալրաղացում, որտեղ և զբաղվում է ձեռքից: 1931 թ. Հրանդ Ք. Արմենն ընդունվում է Դետրոյտի համալսարանը և երեք տարի հետո փայլուն քննություններ հանձնում՝ ստանալով իրավագիտության դոկտորի աստիճան:

Սկզբնական շրջանում Հրանդ Ք. Արմենը աշխատում է որպես իրավաբան, սակայն նրա նախասիրությունն էր պատմությունը, հատկապես հայոց պատմությունը: Այդ առթիվ նա ասել է՝ «Թրապանիկա՝ փաստաբան, հոգեպահիկա՝ հայոց պատմություն»:

Իրավաբանական աշխատանքին զուգահեռ նա նյութեր է հավաքում հայ մոզոլոգի պատմության տարրեր շրջանների վերաբերյալ, ուսումնասիրում հայ ու օտար աղբյուրները, միաժամանակ աշխատակցում հայապիտական պարբերականներին: Շուտով մեկը մյուսի ետևովից լույս են տեսնում Հրանդ Արմենի ամբողջա-

կան ուսումնասիրությունները, որոնք աչքի են ընկնում նոր, հետաքրքիր մոտեցումներով ու մեկնաբանություններով:

1940 թ. Դետրոյտում անգլերեն լեզվով լույս տեսավ նրա ծավալուն աշխատությունը՝ Տիգրան II-ի մասին՝ «Մեծն Տիգրան» խորագրով:

Այդ մանրադնին գիտական ուսումնասիրությունը մեծ ճանաչում բերեց Հրանդ Արմենին թե՛ Սփյուռքում, և թե՛ հայրենիքում:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ մի սեղմ մեջբերում անել Հրանդ Ք. Արմենի «Մեծն Տիգրան» ուշադրավ մենագրության առաջարան-հանձնարարականից, որը պատկանում է մեծավաստակ հայապետ Դարեգին Հովսեփյանի գրչին:

«Վերջին ժամանակներս, — գրել է պատկանելի գիտնականը, — հայ բանասերների կողմից Տիգրան Մեծի կյանքն ու զործը արժանացել է արտաքու կարգի ուշադրության: Հրանդ Արմենը, խնդիրները չի կշռում միայն հայկական պայմաններով, այլ և շրջակա աղյուրի քաղաքական և այլ հանգամանքների, Հռոմի ձգտումների, նորա քաղաքական կուսակցությունների, զորավարների նկարագրի վերլուծությամբ, որով և նորա պատմությունն ընթանում է պատճառաբանված, դեպքերի և զործողությունների հարակից լուսո տակ: Հեղինակը, որքան և դրական և անհատական վերաբերմունք ունի դեպի Տիգրանի անձը, բայց ձեռքից չի թողնում յուր քննադատությունն ու անաչառությունը...»:

Նույն աշխատությունը հայերեն լույս տեսավ 1947 թ.: Շուտով Վենետիկում, Երուսաղեմում, Լոս Անջելոսում տպագրվեցին «Խորենացի, Եղիշե և Հ. Ներսես Աղիսյան», «Մարզպանը և Սպարապետը», «Պատմություն խորենացիի քննադատության», «Պապ Արշակունի», «Փառանձեմ թագուհի» և ուրիշ աշխատանքներ, որոնք կարևոր ներդրում էին հայ պատմության մեջ: Սակայն Հրանդ Ք. Արմենի մեծ ծառայությունը հայ պատմագիտությանը Արտաշեսյան հարստության ուսումնասիրությունն է: Նա տասնյակ տարիներ հայ և օտար աղբյուրներում պահպանված տեղեկությունները հավաքել, ստուգել, համադրել ու ամբողջացրել է, որպեսզի հնարավորություն ունենա ընթերցողին արժանավայել ներկայացնելու Արտաշեսյան հարստության երեք նշանավոր դեմքերին՝ Արտաշես I-ին, Տիգրան II-ին և Արտավազդ II-ին:

1 Տե՛ս Հրանդ Ք. Արմեն, Մեծն Տիգրան, Բ տպագրություն, Գահիրե, 1957, էջ 1, 3:

Այդ նյութերի մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա նա հնարավորություն ունեցավ դրել իր ամենանշանավոր աշխատությունը՝ «Անկումն Արտաշեսյան հարստության»:

Հրանգ Արմենը ուներ անհանգիստ, պրպտող միտք, հարուստ գիտելիքներ, բանավիճելու մեծ կարողություն, զգաստ միտք, կուռ տրամաբանություն:

Հր. Արմենը աշխատում էր իր ժողովրդին ներկայացնել նրա անցյալի ճշմարտացի պատմությունը: Նա սփյուռքի առաջին դիտնականներից էր, որ սկսեց աշխատակցել Հայաստանի գիտական պարբերականներին: «Պատմաբանասիրական հանդեսում» տպագրված են նրա մի շարք հոդվածները՝ «Քանի մը գիտողություններ Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության»-ի հատորի Ա մասի առթիվ» (1959), «Խորենացիի պատմության 4-րդ գիրքը» (1960), «Խորենացիի պատմագրքի գրության թվականը» (1960), «Արտավազդ Բ և Անտոնիոս» (1963), «Խորենացին և աղբյուրների ընտրությունը» (1964), «Խորենացի և Փավստոս» (1965), «Արշակունիք և լուսավորչաներ» (1967) և այլն, որոնք

իրենց ինքնատիպությամբ բարձր գնահատականի արժանացան սովետահայ պատմաբանների կողմից:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակի առթիվ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի՝ հայրենիք այցելելու հրավերին ի պատասխան, անվանի պատմաբանը իր նամակում գրել է. «Ձեր ուրախարհեր հրավեր հեռագիրը ստացաւ Ափսոս որ անոր առթած ուրախությունը լիովին ըմբռնելու կարող չեմ ներկայիս: Թեթև կաթված մը անշարժության մատնեց զիս: Բերշկական հրամանի կաշկանդումները անկարելի կդարձնեն ճամբորդել առայժմս: Երևակայությամբ է, որ պիտի մասնակցիմ տոնակատարության: Երախտապարտ եմ Ձերի ինձի այս բացառիկ պատիվը ընծայելուդ համար: Ինձի կմնա հուսալ, որ օր մը անձամբ կտեսնեմ Ձեզ հայտնելու, թե որքան ուրախացուցիք զիս հայրենիք հրավերի արժանի նկատելուդ: Յավոք, հայրենասեր պատմաբանը չկարողացավ այցելել իր հայրենիքը: Նրա բաղձանքը մնաց անկատար:

Վ. ՀԱՄԱԶԱՍՊԱՆ